Հայաստանի Հանրապետություն
ԲԻԶՆԵՍ ԿՈՆՍԱԼՏ

ՀՀ, 0015 Երևան, Զաքիյան փ.8/30բ
Հեռ.՝ (374 10) 567767, 582478, Ֆաքս՝ (374 10) 562404, էլ.փոստ՝
businessconsult@bc.am

13 Մարտի 2007թ.
N 0276

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բիզնես Կոնսալտ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Աուդիտորական գործունեության իրականացման
արտոնագիր թիվ 003՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԷԵՓՖ» Փոխատվական Հիմնադրամին՝
«ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության միակ մասնակցին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2006թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար և իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով, 2006թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակի մասին, իսկ հաշվապահական հաշվառումը Ընկերությունում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և ՀՀՀՀՍ-ի պահանջներին համապատասխան:

Աուդիտոր

Թոփուզյան Լևոն / /

"28" մարտի 2007թ.